

Պ-196-22.01.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 68-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ ավարտված գործողությունը (անգործությունը), եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու (անգործություն կրկին դրսևորելու) վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:»

**Հոդված 2.** Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «վարչական ակտը» բառերից հետո լրացնել «, վարչական մարմնի ավարտված գործողությունը կամ անգործությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասում «միայն նյութական իրավունքի խախտման հիմքով» բառերը փոխարինել «նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

<p>Նախագծի 1-ին հոդվածի «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ (այսուհետ՝ Օրենսգիրք) հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում» բառերով</p>	<p align="center">հեղինակ</p>	<p>նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>Նախագծի 1-ին հոդվածի «վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը» բառերը փոխարինել «, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը» բառերով</p>	<p align="center">հեղինակ</p>	<p>նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>Նախագծի 2-րդ հոդվածում «իրավունքի» բառից հետո լրացնել «նորմերի» բառը</p>	<p align="center">հեղինակ</p>	<p>նախագծում կատարվել է համապատասխան լրացում</p>
<p>Օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում «կամ գործողությունը» բառերից հետո լրացնել «(անգործությունը)» բառով</p>	<p>ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դ. Հարությունյան</p>	<p>ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրացում</p>

<p>Օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «կամ գործողություն» բառերից հետո լրացնել «(անգործություն)» բառով</p>	<p>ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դ. Հարությունյան</p>	<p>ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրացում</p>
<p>Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը <i>կամ իրեն սպառնած գործողությունը կամ ագործությունը</i> ոչ իրավաչափ ճանաչելու մասին.»»</p>	<p>ՀՀ Կառավարություն</p>	<p>ընդունվել է մասնակի, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասը</p>	<p>ՀՀ Կառավարություն</p>	<p>չի ընդունվել</p>